

342-7

2 - 11



347.2  
2-11

ար

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՅԽՀ ԱՐԳԱՐԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԵԱԿՆ ԿՈՄԻՏԵՐԻՆԵՐԻ

ԳԻՐԲ № 10

Ն Ո Ր

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՈՐԵՆՔ

(ՄԱՏՉԵԼԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)



37.667

31 MAR 1910

09 SEP 2013

347.2  
Σ-11

557

# ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՍԻՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ, ԳԱՎԱՌԱՅԻՆ ՈՒ ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ  
ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՎԱՆՆԵՐՈՒՄ  
ՍԱՀՄԱՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ

1928 թ. մարտի 10-ին

Գոյութուն ունեցող բնակելի ֆոնդը պահպանելու և բնակարանային վարձը բնակարանային տնտեսությունների ծախսերը ծածկելու համար անհրաժեշտ չափերին մոտեցնելու նպատակով, համաձայն բնակարանային վարձի վերաբերյալ ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և Ժողովրդական Կոմիտեների Խորհրդի 1926 թվի հունիսի 4-ի վարչական (ԽՍՀՄ Որ. և Կարգ. Ժող. 1926 թ. № 44, հոդ. 312) և ի վերաջուհն 1924 թվի հուլիսի 26-ի «բնակարանային ղեկընտր» (ՀՍԽՀ Որ. և Կարգ. Ժող. 1924 թ. № 11, հոդ. 39) և 1926 թ. հունվարի 12-ի «1924 թ. հուլիսի 26-ի բնակարանային ղեկընտրի փոփոխման ու լրացման մասին» վարչական (ՀՍԽՀ Որ. և Կարգ. Ժող. 1926 թ. № 2, հոդ. 8) ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիտեների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ.

1. 1928 թ. ապրիլի 1-ից քաղաքներում, զավառային ու զավառակային կենտրոններում և

ՀԱՅ ՊՈԼԻԳՐԱՖԻ 1 ՏՊԱՐԱՆ  
ՊԱՏՎԵՐ № 2550  
ԳՐԱԹԵՊՎԱՐ № 675-բ.  
ՏԻՐԱԺ 3000



684-2010

բանվորական ավաններում բարեկարգ բնակարանի մի քառակուսի մետր (1,98 քառ. մետր) պիտանի բնակելի տարածութեան համար սահմանվում են բնակարանային վարձի ամսական հետևյալ կողարները.

Բանվորները և ծառայողները, վորոնք ստանում են ամսական	Յերևանում և Լենինականում	Այլ քաղաք- ներում	Գաղափարային ու գաղափարական կենտրոններում և բանվորական ավաններում
ա) մինչև 20 ուրբի	5,5	5,5	5,5
բ) 21 ուրբուց մինչև 31 ուրբի	8	7	6
դ) 31 » » 40 »	12	9	7
դ) 41 » » 50 »	15	12	9
ե) 51 » » 60 »	18	14	11
դ) 61 » » 70 »	21	17	13
բ) 71 » » 80 »	23	19	15
թ) 81 » » 90 »	27	22	17
ժ) 91 » » 100 »	30	25	19
ի) 101 » » 110 »	33	27	21
լ) 111 » » 125 »	36	30	23
խ) 126 » » 145 »	38	32	26
ծ) 145 ուրբուց բարձր աշխատավարձի յուրաքանչյուր լրիվ 25 ուրբ. համար ավելացվում է 1-ական կող. բաց փոչ ավելի քան . . . . .	80	60	40

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Պետական թոշակառուները և սոցիալական ապահովագրութեան ու սոցիալական ապահովութեան կարգով խնամվող անձինք, վորոնք ամսական 20 ուրբուց ավելի չեն ստանում, ինչպես և նպաստ ստանալու իրավունք ունեցող գործազուրկները, կարմիր բանակայինների՝ ինքնուրույն լեկամտի աղբյուր չունեցող ընտանիքները և սխտական դպրոցների ուսանողները, վորոնք ստանում են պետական թոշակ կամ ազատվում են ուսման վարձից, բնակարանային վարձը վճարում են 20 ուրբ. փոչ ավելի աշխատավարձ ստացող բանվորների և ծառայողների համար սահմանված կողարներով (1-ին հոդվածի «ա» կետ)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Պետական թոշակառուները, սոցիալական ապահովութեան և սոցիալական ապահովագրութեան կարգով խնամվող անձինք, վորոնք ամսական 20 ուրբ. ավելի նպաստ կամ թոշակ են ստանում, բնակարանային վարձը վճարում են իրենց ստացած նպաստի կամ թոշակի համեմատ՝ ամսական 20 ուրբ. ավելի ստացող բանվորների և ծառայողների համար սահմանված կողարներով (1-ին հոդվածի «բ» — «ձ» կետերը)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3.— 1-ին ծանոթութեան մեջ հիշատակված՝ կարմիր բանակայինների ընտանիքների անդամները կարող են իսպառ ազատվել բնակարանային վարձից սեղական քաղաքացիներին կողմից, իսկ վորտեղ քաղաքացիներ չկան՝ գաղափարական գործկոմիտեի կողմից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 4.— Գրական աշխատանքով զբաղվողները, նկարիչները, քանդակագործներն ու գիտական աշխատավորները բնակարանավարձ վճարում են բանվորների և ծառայողները համար սահմանված կողարձներով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 5. — Բանվորներն ու ծառայողները, ինչպես նաև բանվորներին ու ծառայողներին հավասարեցրած սնձինք, գյուղական վայրերում բնակարանային վարձ են վճարում անատիրոջ հետ փոխադարձ համաձայնության գալով, սակայն գավառակային կենտրոնների ու բանվորական ավանների համար սահմանված բնակարանային վարձի կողարձներից վոչ ավելի:

2. Տնայնագործներն ու արհեստավորները իրենց չեկամտի համեմատ վճարում են՝

ա) նրանք, փորոնք չունեն վարձու բանվորներ կամ ունեն մի բանվոր կամ չերկու աշակերտ և չեկամտային հարկ չեն վճարում, — անատիրոջ հետ համաձայնության գալով, բայց վոչ պակաս քան 26 կ. մի քառ. մետրի համար այս փորոշմամբ նախատեսված բոլոր վայրերում, և վոչ ավելի քան 38 կ. Յերևան ու Լենինական քաղաքներում, 32 կ. այլ քաղաքներում և 26 կ. գավառային ու գավառակային կենտրոններում ու բանվորական ավաններում.

բ) նրանք, փորոնք չունեն վարձու բանվորներ կամ ունեն մի բանվոր կամ չերկու աշա-

կերտ, բայց վճարում են չեկամտային հարկ, — անատիրոջ հետ համաձայնության գալով, բայց վոչ պակաս քան 38 կ. և վոչ ավելի քան 80 կ. մի քառ. մետրի համար Յերևան ու Լենինական քաղաքներում, վոչ պակաս քան 32 կ. և վոչ ավելի քան 60 կ. այլ քաղաքներում և վոչ պակաս քան 26 կ. և վոչ ավելի քան 40 կ. գավառային ու գավառակային կենտրոններում և բանվորական ավաններում.

գ) նրանք, փորոնք ունեն չերկու կամ չերեք վարձու բանվոր կամ չերեքից մինչև վեց աշակերտ, — անատիրոջ հետ համաձայնության գալով, բայց վոչ պակաս քան 88 կ. մի քառ. մետրի համար այս փորոշմամբ նախատեսված, բոլոր վայրերում և վոչ ավելի քան 1 ու 60 կ. Յերևան և Լենինական քաղաքներում, 1 ու 40 կ. այլ քաղաքներում և 1 ու 20 կ. գավառային ու գավառակային կենտրոններում և բանվորական ավաններում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. — Արհեստագործական կոոպերատիվ բնկերութունների (արտեյների) և կանոնադրության հիման վրա գործող աշխատավորական արտեյների անդամները բնակարանային վարձ են վճարում անայնագործների և արհեստավորների համար 2-րդ հոդվածի «ա» և «բ» կետերով սահմանված կողարձներով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Նույն արտելների անգամները, չերբ այդ արտելները աշխատում են պետական ձեռնարկությունների և հիֆնարկությունների պատվերներով, չեթե նրանք իրենց աշխատանքի համար ստանում են վորոշ վարձատրություն և մասն չեն ստանում արտելի վատակից, — բնակարանավարձ են վճարում բանվորների ու ծառայողների համար 1-ին հոգվածում սահմանված կոպարներով:

3. Ազատ պրոֆեսսիալի տեր անձինք, նայած իրենց չեկամուտներին՝ վճարում են.

ա) չեկամտային հարկ չվճարողները — 38 կ. մի քառ. մետրի համար Յերևան և Լենինական քաղաքներում, 32 կ. այլ քաղաքներում և 26 կ. գավառային ու գավառակային կենտրոններում ու բանվորական ավաններում.

բ) Յեկամտային հարկ վճարողները — տնատիրոջ հետ համաձայնության գալով, բայց վոչ պակաս քան 40 կ. և վոչ ավելի քան 1 ու. 60 կոպ. մի քառ. մետրի համար Յերևան ու Լենինական քաղաքներում, 35 կ. վոչ պակաս և 1 ու. 40 կ. վոչ ավելի այլ քաղաքներում և 30 կոպ. վոչ պակաս և 1 ու. 20 կ. վոչ ավելի գավառային ու գավառակային կենտրոններում և բանվորական ավաններում:

4. Առևտրականները և անաշխատ կատեգորիաների այլ անձինք, նայած իրենց չեկա-

մուտներին՝ վճարում են բնակարանային վարձ տնատիրոջ հետ համաձայնության գալով, բայց վոչ պակաս քան 1 ու. 98 կ. և վոչ ավելի քան 3 ու մի քառ. մետրի համար Յերևան և Լենինական քաղաքներում, 1 ու. 32 կ. վոչ պակաս և 2 ու. 40 կ. վոչ ավելի — այլ քաղաքներում և 1 ու. 32 կ. վոչ պակաս ու 2 ու. վոչ ավելի — գավառային ու գավառակային կենտրոններում և բանվորական ավաններում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Այն անձինք, վորոնք առևտուր են անում 1-ին կարգի արտոնագրերով, բնակարանային վարձ են վճարում տնայնագործների և արհեստավորների համար 2-րդ հոգվածի «բ» և «գ» կետերով սահմանված կոպարներով:

5. Բանվորների և ծառայողների և նրանց հավասարեցրած անձանց, 2-րդ հոգվածի «ա» և «բ» կետերում հիշված տնայնագործների և արհեստավորների, ինչպես նաև չեկամտային հարկ չվճարող, ազատ պրոֆեսսիալի տեր անձանց (3-րդ հոգվածի «ա» կետ) բնակարանային վարձի կոպարները յենթակա չեն իջեցման.

ա) ելեքտրական լուսավորության բացակայության դեպքում, չեթե ավլալ վալրում ելեքտրականություն կա . . . . . 5<sup>0</sup>/<sub>0</sub> ով.

բ) բախում ջրմուղ չլինելու դեպքում՝ 5<sup>0</sup>/<sub>0</sub> ով.

գ) միջանցիկ բնակարանների համար՝ 8<sup>0</sup>/<sub>0</sub> ով.

դ) կիսամութ և միջանցիկ բնակարանների համար . . . . . 15<sup>0</sup>/<sub>0</sub>-ով.

ե) տանիքի տակի բնակարանների համար . . . . . 10<sup>0</sup>/<sub>0</sub>-ով.

զ) նկուղային և կիսանկուղային բնակարանների համար . . . . . 25<sup>0</sup>/<sub>0</sub>-ով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. — 5-րդ հոդվածի «ա» — «զ» կետերով նախատեսված՝ բնակարանային վարձի իջեցման ընդհանուր գումարը չպետք և զերգաղանցի բնակարանային վարձի 50<sup>0</sup>/<sub>0</sub>-ից և պետք և լինի վոչ պակաս քան 5,5 կոպ. մի քառ. մետրի համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. — Յեթև բանվորների ու ծառայողների և նրանց հավասարեցրած անձանց ծախքով ու նրանց հետ միասին ապրում են ինքնուրույն աշխատանքից զուրկ՝ ընտանիքի այլ անդամներ, և ընտանիքի աշխատող չուրաքանչյուր անդամին ընկնում և նրա ծախքով ապրող 2 անձից ավելի, ապա սկսած աշխատողի ծախքով ապրող 3-րդ անձից՝ չուրաքանչյուրի համար բնակարանավարձը զեղչվում և 10<sup>0</sup>/<sub>0</sub>-ով, սակայն զեղչի ընդհանուր գումարը չի կարող ամբողջ բնակարանավարձի 30<sup>0</sup>/<sub>0</sub>-ից ավելի լինել:

6. Վարձողները վերոհիշյալ կողարներով բնակարանավարձ են վճարում իրենց և իրենց ծախքով ապրող՝ ընտանիքի անդամների բռնած բնակելի տարածության համար չուրաքանչյու-

րին ընկնող լոթ և կես քառ. մետր (15 քառ. մրշ.) տարածության սահմաններում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Վարձողի ընտանիքի անդամ են համարվում ամուսինը և նրա հետ միատեղ ապրող և ամբողջովին կամ մասամբ նրա ծախքով ապրող այլ անձինք, ինչպես և նրա տնային աշխատողները:

7. 6-րդ հոդվածում նախատեսված նորմալից ավելի բռնված բնակելի տարածության համար վարձողները վճարում են համապատասխան կողարների կրկնակի չափով, բայց վոչ պակաս քան 38 կոպ. Յերևան և Լենինական քաղաքներում, 32 կ. այլ քաղաքներում և 26 կ. գավառային ու գավառակային կենտրոններում ու բանվորական ավաններում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Բանվորներն ու ծառայողները և նրանց հավասարեցրած անձինք, ինչպես նաև այն անձանց կատեգորիաները, վորոնց տեղական խորհուրդների և գավառակային գործկոմների կողմից կտրվի նորմալից զուրա լրացուցիչ բնակելի տարածություն, ավելորդ բնակելի տարածության համար վճարում են սովորական չափով՝ նորմալով նրանց հասանելիք բնակելի տարածության մի չերրորդի սահմաններում:

8. Բանվորների և ծառայողների բնակարանային վարձը հաշվելիս նկատի չե առնվում

նրանց ամբողջ ամսական աշխատավարձը, բացի արտաժամյա աշխատավարձից, ինչպես նաև պատասխանատու ծառայողների կողարներով վարվարձատրութուն ստացող անձանց հատուկ հավելումից (нагрузка): վարձու աշխատանքի անձինք, փորոնք վարձատրութուն են ստանում, փորպես մտանագետներ, կամ աշխատում են գուգավարութւամբ, կամ բացի հաստատուն կուպարից ստանում են տանայեմա կամ տսկոսային վարձատրութուն, բնակարանային վարձը վճարում են իրենց ամսական չեկամտի միացյալ գումարի համեմատ:

9. Յեթե ընտանիքի կազմի մեջ կան մի քանի անձինք, փորոնք ունեն ինքնուրուշն աշխատավարձ, բնակարանային վարձը հաշվելիս նկատի չե առնվում ընտանիքի մեջ ամենաբարձրը աշխատավարձ կամ չեկամուռ ունեցող անդամի աշխատավարձը կամ չեկամուռը:

10. Բանվորներն ու ծառայողները և նրանց հավասարեցրած անձինք սվյալ ամսի բնակարանային վարձը վճարում են հաջորդ ամսի 10-ից վոչ ուշ, իսկ մնացած կատեգորիաները վճարում են ընթացիկ ամսի 15-ից վոչ ուշ:

11. Այս փորոշման ներգործութունը տարածվում է նաև բոլոր ազգայնացված, քաղա-

բայնացված և մասնավոր տների վրա բացի կառուցման իրավունքի հիման վրա (Քաղ. Որ. 166 հոդ. ծանոթութուն) կառուցված, վերաշինված և ավարաված տներից և սրով բնակվողներին վարձով տրվող հյուրանոցներից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Բանվորական-բնակարանային կոոպերատիվներին տրված տներում բրնակվող բանվորների, ինչպես նաև նոր կառուցված տների բնակարանային վարձի կուպարները կարգավորվում են հատուկ կանոններով:

12. Տնատերերի կողմից վարձողներին մատուցվող կոմունալ ծառայութունների, ինչպես նաև կենտրոնական տաքացման վարձը վճարվում է չուրաքանչյուր վարձողի փաստացի սպասման չափով՝ անկախ նրա վճարած բնակարանային վարձի չափից:

13. Տների ծախքերը, այն է՝ կառավարչութունը, շենքերի ու մայթերի վերաշինութունն ու պահպանութունը, գիշերապահների և դռնապանների վարձը, բակերի ու սանդուխտների լուսավորութունը, անձրաժեշտ ինվենտար գներու և այլ ընթացիկ ծախքերը, ինչպես և հարկերն ու ապահովագրական տուրքը, վճարվում են տնատերերի հաշվին:

14. Այս փորոշումը կիրարկութւան դնելուց հետո բնակելի շենքերի վերաբերյալ բոլոր պալ-

մանագրերի ու իրավահարաբերութիւնների աջն  
մասը, վորը վերաբերում է այդ շենքերի վարձի  
չափին և այս վորոշումով նախատեսված այլ  
պայմաններին, չենթակա չե փոփոխութեան հա-  
մաձայն այս վորոշման:

15. Այս վորոշումով նախատեսված բնա-  
կարանային վարձի նորմաներից ավելի բնակա-  
րանային վարձ գանձել չի թույլատրվում: Նոր-  
մայից ավելի բնակարանային վարձ գանձողները  
պատասխանատու թիւն են չենթարկվում ՀՍՍՀ  
Քրեական Որենագրքի համաձայն:

16. Ի զարգացումն այս վորոշման հրահանգ-  
ները հրատարակում է Ներքին Գործերի Ժողո-  
վրդական Կոմիսարիատը:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի

Նախագահի տեղակալ՝ Հ. Ա.ՂԱՏՅԱՆ

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի

Նախագահի տեղակալ՝ Ա. ՄՈՒՎ.ՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի

Քարտուղար՝ Ռ. ԳԱՇՏՈՅԱՆ

Յերևան.

Հրատարակված է. «Սորհրդ. Հայաստ.» 1928 թ.  
մարտի 21-ին և 22-ին, №№ 67 և 68.

## Հ Ր Ա Հ Ա Ն Ք

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ  
ՅԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

1928 թ. ապրիլի 9-ին.

Ի զարգացումն ՀՍՍՀ Կենտրոնական Գոր-  
ծադիր Կոմիտեյի Նախագահութեան և Ժողովրդ-  
ական Կոմիսարների Սորհրդի 1928 թ. մարտի  
10-ի՝ «Քաղաքներում, գավառային ու գավա-  
ռական կենտրոններում և բանվորական ավան-  
ներում սահմանվող բնակարանային վարձի մա-  
սին» վորոշման Ներքին Գործերի Ժողովրդական  
Կոմիսարիատը և Արդարագատութեան Ժողո-  
վրդական Կոմիսարիատը հրատարակում են հե-  
տևյալ հրահանգը. —

1. Յուրաքանչյուր տան բնակելի տարա-  
ծութեան  $\frac{1}{3}$  մասը համարվում է կոմունալ ֆոնդ  
և տրամադրվում է քաղխորհուրդներին ու գոր-  
ծադիր կոմիտեներին՝ բանվորներին և ծառայող-  
ներին հատկացնելու համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. — Յեթի բանվորներն ու  
ծառայողները ներկայումս ապրում են տնա-

տիրոջ ֆոնդի սենյակներում, վերջինները ազատ-  
վելուց հետո տրամադրվում են տնտեսներին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. — Կոմունալ ֆոնդի համար  
մաս հատկացնելուց ազատվում են մինչև չերկու  
սենյակ ունեցող տները, իսկ չերեք սենյակ ու-  
նեցողները — նախելով տան բնակելի տարածու-  
թյանը, ընտանիքի անբաժան անդամներին՝ վին  
և նրանց բռնած բնակելի տարածության չտալին:

2. Կոմունալ ֆոնդից հատկացվող բնակա-  
րաններում բնակվելու համար այս հրահանգի 1  
հոդ. հիշված հիմնարկների կողմից արվում են  
համապատասխան որդերներ:

3. Բանվորները և ծառայողները և նրանց  
հավասարեցված անձինք բնակարանային վարձը  
վճարում են որեւորով սահմանված կողարներով,  
անկախ այն հանգամանքից, թե նրանք կոմու-  
նալ ֆոնդի, թե անատիրոջ ֆոնդի սենյակնե-  
րում են ապրում:

4. Ընտանիքի չուրաբանչուեր անգամի հա-  
մար արամադրվում է բնակելի տարածութուն  
յոթ և կես քառ. մետրի սահմաններում:

5. Լրացուցիչ բնակարան կամ նրա բացա-  
կալության զեպքում լրացուցիչ բնակելի տարա-  
ծութուն ունենալու իրավունք են վայելում հա-  
մաձայն քաղխորհուրդների և գործկոմների կող-  
մից կազմած ցուցակների հետևյալ կատեգորի-  
այի անձինք. —

ա) մեկուսացում պահանջող վարակիչ և  
հոգեկան հիվանդությամբ տառապողները այն  
պայմանով, չեթե նրանք ներկաացնեն բժշկա-  
կան հանձնաժողովից ստացված վկայական.


բ) պետական հիմնարկների, ձեռնակու-  
թյունների, զինվորական գերատեսչութունների,  
նաև պրոֆեսիոնալ կոոպերատիվ աշխատակից-  
ները, վորոնք ըստ իրենց պաշտոնի բնույթի աշ-  
խատում են և՛ տանը.

գ) ազատ արհեստով զբաղվող բժիշկները և  
ատամնարուժները և աշխատ անձինք, վորոնք  
նախատեսված կլինեն քաղխորհուրդների և գործ-  
կոմների ցուցակներով:

6. Յեթե անատիրոջ կամ վարձակալի բըւ-  
նած բնակելի տարածութունը ավելի չէ այս  
հրահանգի 4-րդ հոդվածով վորոշված նորմանե-  
րից, քաղխորհուրդներին և գործադիր կոմիտե-  
ներին իրավունք է վերապահվում բացառիկ  
զեպքերում վարչական կարգով խտացում կամ  
տեղափոխութուն կատարել:

7. Քաղաքացիներին իրենց բռնած բնակա-  
րաններից, վարպես ընդհանուր կանոն, կաշեղի  
չե վտարել դատական կարգով Քաղ. Որ. 171,  
171-ա հոդվածներով նախատեսված զեպքերում,  
իսկ վարչական կարգով միայն հետևյալ զեպ-  
քերում. —

1910-189  
1776



ա) չեթե կոմունալ ֆոնդի բնակարանում բնակվողը չունի համապատասխան որդեր.

բ) չեթե բնակարանը չերեք ամիս մնացել է առանց ոգտագործման.

գ) չեթե հիմնարկութան կամ ձեռնարկութան համար հատկացված շենքում բնակվողը այլևս վոչ մի առնչութուն և կապ չունի տվյալ հիմնարկութան կամ ձեռնարկութան հետ:

8. 7-րդ հոդ. «ա» և «բ» կետերում հիշված դեպքերում վարչական կարգով վտարումը կատարվում է քաղխորհուրդների և գաղգործկոմների նախագահութունների վորոշումների հիման վրա, միլիցիայի միջոցով, իսկ «գ» կետում հիշված դեպքերում — հիմնարկութան կամ ձեռնարկութան պետի կամ վարիչի կարգադրութամբ, նույնպես միլիցիայի միջոցով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. — Դատարաններին ևս իրավունք է վերապահվում վարույթի մեջ գտնվող վորոշ գործերի առթիվ հարկ չեղած դեպքերում խտացման կամ տեղափոխութան մասին վորոշում կայացնելու:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. — Ատացումը կամ տեղափոխութունը կարող է տեղի ունենալ — թե միևնույն բնակարանի սահմաններում և թե տարբեր բնակարանների մեջ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3. — 7-րդ հոդվ. «գ» կետում հիշված բանվորներին, նույնպես և նրանց հա-

վասարեցված անձանց վարչական կարգով վտարելը կարող է տեղի ունենալ այն դեպքում, չերք քաղխորհուրդները և գործկոմները կամ վտարող հիմնարկութունները վտարվողներին կտրամադրեն համապատասխան բնակարան և փոխադրական միջոցներ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 4. — 7-րդ հոդ. «բ» կետի կիրարկութան համար սահմանվում է հետևյալ կարգը. —

ա) ապահովագրված հիվանդներին տրվում է առավելագույն ժամանակ — 4 ամիս

բ) գործուզման կամ արձակուրդի ժականակը լրանալուց հետո — 1 ամիս.

գ) մասնավոր քաղաքացիներին բացակայութան դեպքում տրվում է չերեք ամիս ժամանակ, չեթե բացակայութան միջոցին նրա բնակարանում ապրում են նրա խնամքի տակ ապրող բնտանիքի անդամները:

9. Վարչական կարգով կիրարկվող վտարման, խտացման և տեղափոխման վերաբերյալ վորոշումների դեմ գանգատ կարելի չե տալ դատախազական մարմիններին չերեք որվա ընթացքում, հաշված վտարման, խտացման և տեղափոխման մասին հաշտնելու որից: Քաղխորհուրդները և գործկոմները պարտավոր են վտարման կամ տեղափոխման մասին 7 որ առաջ գրավոր կերպով հաշտնելու վտարման կամ տեղափոխման չենթակա անձանց:

10 Հյուրանոցներում բնակվողներին փոա-  
բելու կարգը սահմանվում է գավգործկոմիտեի  
կամ խորհուրդների առանձին կանոններով, փո-  
րոնք փակցված պիտի լինեն հյուրանոցի յուրա-  
քանչյուր սենյակում: Այդ պարտադիր կանոն-  
ները խախտելիս հյուրանոցում բնակվողները  
փտարվում են վարչական կարգով: Հյուրա-  
նոցից վարչական կարգով փտարվածներին  
քաղխորհուրդները կամ գավգործկոմիտեի պար-  
տավոր չեն նախքան փտարումը սենյակ տրա-  
մադրելու:

11. Բնակարանային նոր որենքի համաձայն  
տնայնագործները, արհեստավորները, ազատ ար-  
հեստով զբաղվող անձինք, առևտրականները, և  
անաշխատ յեկամտով ապրող այլ անձինք բնա-  
կարանավարձը վճարում են որենքով նախատես-  
ված կողարների սահմաններում, իսկ տնատի-  
րոջ հետ համաձայնության չզալու դեպքում բնա-  
կարանավարձի չափը վորոշում է դատարանը:

12. Բնակարանային նոր որենքը չի տա-  
րածվում կառուցման իրավունքի հիման վրա  
կառուցված, վերաշինված և ավարտված տների,  
ինչպես նաև հյուրանոցների վրա:

13. Տների հիմնական վերանորոգության  
բոլոր ծախքերը հոգում են տնատերերը. չեթե

տնատերը հրաժարվի բնակարանը վերանորոգե-  
լուց, այդ դեպքում բնակվողին իրավունք է  
վերապահվում կատարել պահանջված վերանո-  
րոգությունը ի հաշիվ բնակարանավարձի, նա-  
խապես թույլտվություն ստանալով գործկոմիտեի  
և քաղխորհուրդների աեխնիքական մասից:

Ներքին Գործերի  
ժողովրդական Կոմիտեի՝ Ս. Մ.-Հովսեփյան  
Արդարադատության  
ժողովրդական Կոմիտեի՝ Զ. Աբրահամյան ✓

Յերևան:

# ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՈՐԵՆՔ

(ՄԱՏՁԵԼԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՅՅՈՒՆ)

Բնակարանային հարցը այն սոցիալական խնդիրներից մեկն է, վորը շոշափում է բանվորների ու ծառայողների ելական շահերը: Հեղափոխութեան առաջին իսկ որերից Խորհրդային Իշխանութունը այդ հարցը, իբրև իր կարևորագուն նպատակներից մեկը, դնում է այն մակարդակի վրա, վորպեսզի աշխատավորին ապահովի բնակարանով և զարկ տա բնակարանային շինարարութեանը: Այդ նպատակով նա՝

ա) տների ոգտագործման հարցը կարգավորելիս սահմանում է բնակարանային վարձը այն լեզանակով, վոր նրա մեծագուն մասն ընկնում է ազգաբնակչութեան անաշխատ կատեգորիաների, իսկ նվազագուն մասը՝ բանվորների ու ծառայողների վրա:

բ) պարտավորեցնում է մասնավոր սեփականատերերին հոգ տանելու տների պահպանութեան մասին, կատարելով անհրաժեշտ նորոգութունը, հակառակ դեպքում նրանց տներն որենքով սահմանված կարգով կարող են հանվել

նրանց ոգտագործութունից և հանձնվել գաղտնիկութեանը:

գ) աջակցում է բանվոր գասակարգի ինքնագործունեութեանը նոր բնակարաններ կառուցելու և կոլլեկտիվ ոգտագործման համար հատկացված բնակարանները վերաշինելու ասպարիզում:

Միաժամանակ Խորհրդային Իշխանութունը բնակարանային շինարարութեան գործում ասպարեզ է քաշում մասնավոր կապիտալը և մի շարք արտոնութուններ և տալիս այն տնատերերին, վորոնք կառուցում են նոր շէնքեր կամ վերաշինում են իրենց տները:

Այս բոլոր նկատառումները կազմում են Խորհրդային Իշխանութեան բնակարանային քաղաքականութեան հիմքը և կարգավորվում են համապատասխան որենսդրական ակտերով: ՀՍՍՀ Զանրապետութեան բնակարանային որենսդրութունն արտացոլում է այդ քաղաքականութունը: 1921 թ., 1923 թ. և 1924 թ. բնակարանային որենսդրութեան նպատակն էր պահպանել տներն ավերումից և կարգավորել բանվորների ու ծառայողների, նաև քաղաքի բնակչութեան այլ կատեգորիաների բնակարանային վարձը, վորը սահմանվում է ըստ գասակարգային հատկանիշի,

նաչաձ վարձողի աշխատավարձի չափին ու սու-  
ցիալական դրուժյանը:

Իրան գուզընթաց ՀՍԽՀ կառավարութունը  
ձեռնարկում է մի շարք որենսդրական միջոց-  
ների, վորոնց նպատակն է զարգացնել բնաշա-  
րանաչին շինարարութունը:

Քաղաքացիական Որենսգիրքը կոմունալ բա-  
ժիններին իրավունք է վերապահում քաղաքաչին  
հողերը կառուցման պաշմանով տալ կոոպերա-  
տիվ միութուններին և ալ իրավական անձերի,  
նմանապես և մանավոր անձերի՝ մինչև 60 տա-  
րի ժամանակով՝ քարե տների և 40 տարով  
մնացածների (հող. հող. 71 և 84) համար: Կա-  
ռուցողներն ազատվում են բոլոր պետական և  
տեղական հարկերից ու տուրքերից 3 տարվա  
ընթացքում:

ժողովուրդի 1923 թ. սեպտեմբերի 18-ի  
դեկրետը գալիս է լրացնելու Քաղաքացիական  
Որենսգրքով սահմանված կառուցման իրավունքը  
և տնտեսերին տները վերականգնելու գործում  
մի շարք արտոնութուններ և տալիս (Դեկր. և  
Վոր. Հավ. 1923 թ. № 7, հող. 51):

Այդ դեկրետի գորութւյամբ բնակութւյան և  
առևտրի հարմարութւյուններ ունեցող նոր շինած  
կամ հիմնական վերանորոգման չենթարկված

տներն ազատվում են ազգաչնացումից, քաղա-  
քաչնացումից, ալ և հարկադիր սակագնով վար-  
ձատրութւյունից և թողնվում են իրենց տերերի  
լիակատար տնորինութւյան տակ: Նոր շենքեր  
կառուցելու ասպարեզում բանվորների ու ծա-  
ռաչողների ինքնագործունեչութւյունը զարգաց-  
նելու նպատակով Միութենական կառավարու-  
թւյան 1924 թ. ոգոստոսի 19-ի վորոշման համա-  
ձաչն կազմակերպվում են բնակարանաչին շինա-  
րարական կոոպերատիվ ընկերութւյուններ:

Այդ վորոշումը թուչ է տալիս նմանապես  
վորոշ կասեգորիաչի քաղաքացիների համախմբվել  
և կազմել բնակարանաչին-վարձակալական և հա-  
մաքաղաքացիական բնակարանաչին-շինարարա-  
կան կոոպերատիվ ընկերութւյուններ:

Ահա աչն ուղին, վորով ընթացել է և ըն-  
թանում է մեր որենսդրութւյունը բնակարանա-  
չին շինարարութւյան ասպարիզում:

1926 թ. հուլիսի 4-ին Միութենական կա-  
ռավարութւյունը հրատարակեց մի վորոշում, վո-  
րը սահմանում է բնակարանաչին վարձի կո-  
պարները վոշ միաչն ըստ վերոհիշյալ տվաչների,  
ալ և աչքի առաջ ունենալով նաև տնաչին տրն-  
տեսութւյան իրական պահանչները: Իրանից չեղ-  
նելով՝ Միութենական վորոշումը հաշվի չե առ-

նում բնակելի տարածութեան մի միավորի շահագործման արժեքը (պահպանումը և նորոգութիւնը), այդ արժեքի նորմալ շիջեցումը քաղաքների զանազան կատեգորիաների համար, և փորոշում և բնակարանային վարձն այդ արժեքի համեմատ: (ՍՍՀՄ Որ. Ժող. 1926 թ. № 44, հոդ. 312):

1927 թ. մարտի 10-ին Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և Ժողովրդական Կոմիտարների Սորերդի կողմից հաստատված «Քաղաքներում, գավառային ու գավառակային կենտրոններում և բանվորական ավաններում սահմանվող բնակարանային վարձի մասին» փորոշման հիմքը կազմում են այն սկզբունքները, փորոնք նախատեսված են Միութենական վերոհիշյալ 1926 թ. հուլիսի 5-ի փորոշումով: Նկատի առնելով, փոր այդ փորոշումը խոշոր սոցիալական նշանակութիւն ունի բանվոր դասակարգի և ծառայողների համար, այս գրքուկում մենք կանդ կառնենք նրա վրա և մանրամասնորեն կպարզենք նոր որենքի հոգվածների խմաստը:

### I. ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՈՐԵՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅՅԸ

Նոր որենքը բնակարանային վարձի կուպոնները սահմանում և այն չափով, փորն անհրա-

ժեշտ և անային տնտեսութեան ծախսերը ծածկելու համար: Տնային տնտեսութեան ծախսեր ասելով պետք և հասկանալ աների պահպանութեան, նորոգութեան և առհասարակ բարեկարգ վիճակում պահելու անհրաժեշտ ծախսերը: Յեթե մինչև այժմ մեր բնակարանային որենքութիւնը բնակարանային վարձը սահմանում եր բնակիչների չեկամտի չափի և սոցիալական դրութեան համեմատ, ապա նոր որենքը դրա հետ միասին մտցնում և նոր սկզբունք, այսինքն՝ բնակարանային կուպոնները սահմանելիս հաշիվ չե առնում անային տնտեսութեան իրական պահանջները— շահագործման արժեքը՝ պահպանութիւնը և նորոգութիւնը, և ամորտիզացիոն ծախսերը, այսինքն՝ քաղաքայի սների փոխարեն նորերը կառուցելու անհրաժեշտ միջոցների կուտակումը:

Յենելով այդ սկզբունքից նաև սների և շենքերի վերաբերյալ տեխնիկական ավյախերից, որենքը հետևյալ հիմնական կուպոններն և սահմանում բարեկարգ բնակարանի մի քառակուսի մետր (1,98 քառ. մետր.) պիտանի բնակելի քառամոքյան համար Յերևան և Լենինական քաղաքներում— 38 կ., այլ քաղաքներում — 32 կ., գավառային ու գավառա-

կալին կենտրոններում և բանվորական ավաններում — 26 կ.: Յեղնելով դասակարգային տեսակետից, որենքը բնակարանային վարձի կուպարները աջնպես և սահմանում, վոր քիչ ուձիկ ստացող բանվորներն ու ծառայողները բնակարանավարձ են վճարում հիմնական կուպարներէց (38 կ. — 32 կ. — 26 կ.) պակաս և այդ վարձն աստիճանաբար մոտենում և իր հիմնական կուպարներին, վորչափ ուձիկը բարձրանում և մինչև 125 ո., իսկ 125 ո. մինչև 145 ո. ուձիկ ստացող բանվորներն ու ծառայողները վճարում են բնակարանավարձի հիմնական կուպարներով, այսինքն՝ 38 կ., 32 կ. և 26 կ. մի քառ. մետր պիտանի տարածութեան համար, իսկ 145 ո. ավելի ստացողները վճարում են բնակարանային վարձ հիմնականից ավելի բարձր կուպարներով հետևյալ կերպով. —

145 ուրբուց բարձր աշխատավարձի չուրաքանչուր լրիվ 25 ո. համար ավելացվում և 4-ական կուպ., բայց ընդհանուր առմամբ վոչ ավելի քան 80 կ. Յերեան և Լենինական քաղաքներում, 60 կուպ. այլ քաղաքներում և 40 կուպ. գավառային ու գավառակային կենտրոններում և բանվորական ավաններում մի քառ. մետրի համար: Որենքը բանվորների և ծառայող-

ների համար սահմանում և հաստատուն կուպարներ և բացասում և բնակարանային վարձի մասին մասնավոր համաձայնութեան կնքելու հնարավորութեան հանգամանքը: Որենքը նույնպես մանրամասնորեն վորոշում և բնակարանային վարձը ազգաբնակչութեան մշուս խավերի համար այսինքն՝ անաշնագործների, արհեստավորների, ազատ պրոֆեսսիայի (զբաղմունքի) տեր անձանց, առևտրականների և անաշխատ կատեգորիաների այլ անձանց համար: Բնակարանային վարձը հիշյալ կատեգորիայի անձանց համար որենքը վորոշում և նրանց չեկամտի համեմատ և միևնույն ժամանակ սահմանում և բնակարանավարձի նվազագույն և առավելագույն կուպարները, թույլ տալով այդ անձանց մասնավոր համաձայնութեան կնքել տանտիրոջ հետ այդ կուպարների սահմաններում: Ահա այն սկզբունքները, վորոնք կազմում են նոր բնակարանային սակագնի հիմքը: Բնակարանային նոր որենքի ընդհանուր իմաստը պարզելուց հետո անհրաձեշա և մանրամասնորեն կանգ առնել բանվորների ու ծառայողների բնակարանավարձի վրա:

II. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՎԱՐՁԸ

Բնակարանային վարձի չափերը գետեղված են առանձին տախտակում, վորի մեջ մասնանշ-

ված են բանվորների ու ծառայողների ուձկի 13 կարգ (1-ին հոդվածի «ա» — «ծ» կետերը):

Տախտակի 1-ին սյունակում ցույց են արբ-ված մինչև 20 ու, նաև 21 ու ուրբուց բարձր (21 ու. — 30 ու., 31 ու. — 40 ու., 41 ու. — 50 ու. և այլն) մինչև 145 ուրբի և ավելի ստացող բանվորների ու ծառայողների ուձիկները: Տախտակի 2-րդ սյունակում ըստ ուձիկի մասնա-նըշված են բնակարանավարձի շափերը մեկ մետր պիտանի տարածութան համար Յերեան և Լե-նինական քաղաքներում, 3-րդ սյունակում — այլ քաղաքներում (Ղարաբաղի տա, Գիլիջան, Նոր-բայազետ, Վաղարշապատ և Գորիս), իսկ 4-րդ սյունակում լրացավառային ու գավառակային կենտ-րոններում և բանվորական ավաններում:

Գավառային կենտրոններ են համարվում մեզ մոտ Հաչատանում նաև Գարալոգչապր և Մեղրին. գավառակային կենտրոններն են — Ղա-մաբլու, Ստեփանավան, Աշտարակ, Իջևան, Յե-լենովկա և այլն: Բանվորական ավաններն են՝ Ալրահվերդի գյուղ, Մարտունավան (Ղափանի հանքեր) Մուրենական (Մանես), Շամլուղ, Սա-նահին կաշարան, Սարգարաբազ և այլն: Այլ բոլոր վայրերի վրա տարածվում է բնակարա-նային որենքի ուժը:

Ինչ վերաբերում է գյուղական վայրերին, ապա որենքը, վորպես բացառութուն, միայն բանվորների ու ծառայողների նկատմամբ է կար-գավորում բնակարանավարձի հարցը այդ վայ-րերում և սահմանում է, վոր նրանք վճարում են բնակարանային վարձ սնաստիրոջ հետ փո-խադարձ համաձայնութան գալով, սակայն գա-վառակային կենտրոնների և բանվորական ավան-ների համար սահմանված բնակարանային վարձի կոպարներից վոշ ավելի: (Հոդ. 1, ծանոթ. 5):

Բնակարանավարձը, ինչպես վերևում հիշե-ցինք, վճարվում է մի քառ. մետր պիտանի տա-րածութան համար: Պիտանի տարածութունն ասելով հասկացվում է միայն բնակելի տարա-րածութունը. խոհանոցի, նախասենյակի (հաշտ), լողարանի, մառանի, ցախատան և այլ նման հարմարութունների համար վարձ չի վճարվում, և նրանք համարվում են բնակարանի ոժանդակ մասերը:

Իսկ չեթե այդ ոժանդակ հարմարութուն-ներում ապրում են, և նրանք այլևս չեն ծառա-յում իրենց նպատակին, այդ դեպքում ընդհանուր հիմունքներով հարկավոր է վարձ վճարել նաև դրանց համար:

Արենքը սահմանում է, վոր բանվորների ու ծառայողների բնակարանային վարձը հաշվելիս

նկատի չե առնվում նրանց ամբողջ ամսական աշխատավարձը, բացի արտաժամյա աշխատավարձից, ինչպես նաև պատասխանատու ծառայողների կոպարներով վարձատրութուն ստացող անձանց հատուկ հավելումից (нагрузка):

Պարզաբանենք այդ: Ըստ աշխատանքի գործող որենսդրության գործարանների և այլ նրման ձեռնարկութունների բանվորները, աշխատելով սրենքով սահմանված 8 ժամ, ստանում են ամսական վորոշ աշխատավարձ, վորը համարվում է նրանց ուժիկը: Արտաժամյա աշխատանքների համար նրանք ստանում են վորոշ աշխատավարձ—արտաժամյա վարձատրութուն: Նույնը պետք է ասել նաև աեխնիքական ծառայողների վերաբերմամբ, վորոնք նույնպես ամսական վորոշ ուժիկ են ստանում: Յեթե սահմանված կարգով նրանք կատարում են արտաժամյա աշխատանք, ապա նրանց ստացած արտաժամյա աշխատավարձը չի մտնում նրանց ուժիկի մեջ: Որենքը ներկա դեպքում շեշտում է, վոր բանվորների ու ծառայողների բնակարանային վարձը հաշվելիս նկատի չե առնվում նրանց ամսական աշխատավարձը սուանց արտաժամյա աշխատավարձի:

Ինչ վերաբերում է պատասխանատու ծառայողների կոպարներով վարձատրութուն ստա-

ցող անձանց, ապա այստեղ հարկավոր է ընդգծել հետևյալը՝ պատասխանատու աշխատակիցները ստանում են հիմնական ուժիկ, նաև հատուկ հավելում (нагрузка): Հատուկ հավելումն ստանում են այն հիման վրա, վոր նրանց աշխատանքի ժամանակը չի սահմանափակված: Նրանց վերաբերմամբ բնակարանային վարձը հաշվելիս նկատի չե առնվում միայն հիմնական ուժիկը—սուանց այդ հավելումի: Բացի վերոհիշյալներից կան նաև ծառայողներ, վորոնք վարձատրութուն են ստանում վորպես մասնագետներ կամ աշխատում են զուգավարությամբ, այսինքն՝ միաժամանակ աշխատում են և այլ հիմնարկութուններում կամ ձեռնարկութուններում, կամ բացի հաստատուն կոպարից ստանում են տանտյեմա՝ կամ տոկոսային վարձատրութուն: Այդ անձանց վերաբերմամբ բնակարանային վարձը հաշվելիս նկատի չե առնվում նրանց ամսական չեկամտի միացյալ գումարը: Որինակ՝ չեթե մի մասնագետ (ճարտարագետ, քիմիկոս, հաշվապահ և այլն) ծառայում է միայն մեկ տեղում և ստանում է անհատական կամ սպեց-կոպարով 300 ռ., ապա նա բնակարանավարձ է վճարում 300 ռուբլու հաշվով: Ուրիշ որինակ, չեթե մի ծառայող պրոֆեսսոր, ուսուցիչ և այլն դասախոսում կամ ավանդում է

մի քանի հիմնարկութուններում, ապա բնակարանային վարձ պիտի վճարի վարձատրութեան ընդհանուր դումարի համեմատ: Նուէնը վերաբերում է և ահա անձանց, վորոնք ծառայում են պետական արդշունաբերական ձեռնարկութուններում (տրեստ, սինդիկատ, բաժնետիրական ընկերութուն և այլն) և բացի իրեն հաստատուն ոտճկից հաշվական տարվա վերջին ստանում են վորոշ տոկոս ձեռնարկութեան շրջաբերութունից գոյացած ոգուտից (տանտլեմ):

Բայց չեք բեմն մի ընտանիքում մի քանի աշխատավոր ձեռք են լինում. հարց է ծագում, թե արդոք այդ պարագաներում բնակարանային վարձը ինչպես պետք է վճարել: Որենքը այդ հարցը կարգավորում է այսպես՝ չեթե ընտանիքի կազմի մեջ կան մի քանի անձինք, վորոնք ունեն ինքնուրուէն աշխատավարձ, բնակարանային վարձը հաշվելիս նկատի չե առնվում ընտանիքի մեջ ամենաբարձր ոտճիկ կամ չեկամուտ ունեցող անդամի աշխատավարձը կամ չեկամուտը: Այդ պարգելու համար նախ և առաջ հարկավոր է վորոշել, թե ինչպես պետք է հասկանալ բնակարան վարձողի ընտանիքի կազմը: Վարձողի ընտանիքի անդամ հարկավոր է համարել ամուսնուն և նրա հետ միասեղ սպորող

և ամբողջովին կամ մասամբ նրա ծախքով սպորող այլ անձանց, ինչպես և նրա տնային աշխատավորներին:

Որինակ՝ բանվորն իր կնոջ և չափահաս տղայի հետ բռնում է մի սենյակ: Ընտանիքի անդամներից բացի նրանից ուրիշ վոշ վոք չի աշխատում և նրանք սպրում են բանվորի ծախքով: Այդ դեպքում բնակարանային վարձը հաշվելիս նկատի չե առնվում բանվորի աշխատավարձը: Յենթադրենք, վոր բանվորի տղան ևս աշխատում է և ստանում է ամսական 80 ուր. աշխատավարձ, իսկ հալըրը 60 ո.: Բնակարանային վարձը վճարում է ընտանիքի ահա անդամը, վորը ստանում է ամենաբարձր աշխատավարձ, այսինքն տղան: Վերցնենք ուրիշ որինակ. քուլըրը և չեղբայրը վարձել են չերկու սենյակից բաղկացած բնասարան, ամեն մեկը բռնում է առանձին սենյակ: Յերկուսն ել ծառայում են գործարանում, ստանում են աշխատավարձ, մեկը 60 ո., մյուսը 40 ուր. և ունեն ընդհանուր ամսե սութշուն. այս դեպքում ինչպես պետք է հաշվել բնակարանավարձը: Քանի վոր նրանցից ամեն մեկը ունի կնքնուրուէն աշխատանք և բռնում է առանձին իենյակ, բնակարանային վարձը հաշվելիս հարկավոր է նկատի առնել յուրաքանչյուրի աշխատավարձը. ամեն մեկն իր բռնած սենյակի հա-

մար վճարում ե բնակարանային վարձ ըստ աշխատավարձի, քանի վոր նրանք ընտանիք չեն կազմում վերոհիշյալ իմաստով:

Որենքը նույնպես կարգավորում ե նաև այն հարցը, թե վարձողները վորքան բնակելի տարածություն կարող են բռնել: Այս հարցը խիստ կարևոր ե: Առողջապահական տեսակետից ամեն մի հոգու համար անհրաժեշտ ե մինիմում 12—15 քառ. մետր բնակելի տարածություն: Հայաստանի բնակարանային սուղ պայմանները հնարավորություն չեն տալիս այդպիսի նորմա սահմանել ամեն մի քաղաքացու համար:

Ըստ որենքի վարձողները սահմանված կողարներով բնակարանավարձ են վճարում իրենց և իրենց ծախսով ապրող ընտանիքի անդամների բռնած բնակելի տարածության համար չուրաքանչյուրին ընկնող  $7\frac{1}{2}$  քառ. մետր (15 քառ. արշ.) տարածության սահմաններում: Իհարկե  $7\frac{1}{2}$  քառ. մետր բնակելի տարածությունը չուրաքանչյուրի համար չի կարելի բավարար նորմա հաշվել: Այդ նորման ավելացնելը կախված ե շինարարության զարգացման աստիճանից և ապագայում, չերբ քաղաքներում և այլ վայրերում բնակելի տարածությունը զգալի կերպով կավելանա, այդ դեպքում կավելացվի նաև չուրա-

քանչյուրին հասանելիք բնակելի տարածության նորման:

Որենքը, սահմանելով բնակելի տարածության նորման  $7\frac{1}{2}$  քառ. մետր, միևնույն ժամանակ սահմանում ե, վոր նորմայից ավելի բռնած բնակելի տարածության համար վարձողները վճարում են համապատասխան կողարների կրկնակի չափով, բայց վոչ պակաս քան 38 կ. Յերևան և Լենինական քաղաքներում, 32 կ. այլ քաղաքներում, և 26 կ. գավառային կենտրոններում և բանվորական ավաններում: Իսկ բանվորներն ու ծառայողները ավելորդ բնակելի տարածության համար ( $7\frac{1}{2}$  քառ. մետր. ավելի) վճարում են մոտորական չափով՝ նորմայով նրանց հասանելիք բնակելի տարածության մի չերրորդի սահմաններում: Որինակ, բանվորը, նրա կինն ու քույրը վարձում են բնակարան. նրանք կարող են ունենալ վոչ ավելի քան ընդամենը  $22\frac{1}{2}$  քառ. մետր բնակելի տարածություն (չուրաքանչյուրին  $7\frac{1}{2}$ .  $7\frac{1}{2} \times 3 = 22\frac{1}{2}$ ). յեթե նրանց բնակարանի տարածությունը 30 քառ. մետր ե, ապա ավելորդ բնակելի տարածության համար — այսինքն  $7\frac{1}{2}$  քառ. մետրի համար (30 քառ. մետր —  $22\frac{1}{2}$  քառ. մետր =  $7\frac{1}{2}$  քառ.) նրանք պիտի վճարեն սովորական կողարների չափով, քանի վոր ավելորդը կազմում ե հասանելիք տարածության մի չերրորդը:

Յեթե լինթադրենք, վոր նրանց հասանելի բնակելի տարածության համար ( $22\frac{1}{2}$  քառ. մետր) նրանք վճարում են 6 ու. բնակարանային վարձ, ապա ավելորդ բնակելի տարածության համար հարկավոր է վճարել ևս 2 ուռբլի, ընդամենը ամբողջ բնակարանի համար 8 ուռբլի:

Յեթե բռնած տարածությունը 35 մետր է, ապա մնացած 5 մետրի համար պետք է վճարել կրկնակի չափով, այսինքն՝ 10 մետրի համար:

Որենքը, սահմանելով բանվորների ու ծառայողների համար բնակարանային վարձի հաստատուն կոպարները, միևնույն ժամանակ սահմանում է, թե ինչ պարագաներում բնակարանային վարձը նրանց վերաբերմամբ լինթակա չի իջեցման: Սուհասարակ պետք է ընդգծել, վոր տախտակով սահմանված կոպարներով բանվորներն ու ծառայողները վճարում են բնակարանավարձ այն դեպքում, չեթե շենքը բարեկարգ վիճակի մեջ է գտնվում, այսինքն՝ կան բնակարանի բոլոր հարմարությունները՝ որինակ, ելեքտրականություն, ջրմուղ, բնակարանը տանիքի տակ չէ և այլն: Այն դեպքերում, չեթե տներում բացակայում են այդ հարմարությունները, որենքը բնակարանային վարձի կոպարները իջեցնում է, ցույց տալով, թե ինչ տակոսով պետք է իջեցնել բարեկարգության այս կամ այն տարբեր բացակայելիս. միաժամանակ սահմանվում է, վոր իջեցումը չպետք է անցնի բնակարանային վար-

ձի  $50\frac{0}{100}$ -ից, և բնակարանավարձը չպետք է 5,5 կոպեկից պակաս լինի մի մետրի համար:

Պարզենք որինակներով.

Յենթադրենք, վոր բանվորը իր ընտանիքով (կինը և աղջիկը) Յերեսնում բռնում է մի սենյակ 15 քառ. մետր տարածությամբ: Բանվորը ստանում է աշխատավարձ 70 ու. ըստ տախտակի (կետ «գ»). նա ամեն մի քառ. մետր տարածության համար պետք է վճարե— 21 կոպ., 15 քառ. մետրի համար կվճարի  $21 \text{ կ.} \times 15 = 3 \text{ ո.} 15 \text{ կ.}$  ամսական. այդքան բնակարանավարձ նա վճարում է այն դեպքում, չեթե կան բնակարանի բոլոր հարմարությունները:

Յենթադրենք, վոր նրա բնակարանում բացակայում են ելեքտրականությունը և ջրմուղը, և բնակարանը նկուղային է: Ըստ որենքի (հոդ. 5 կետեր «ա», «բ» և «գ») ելեքտրական լուսավորություն բացակայության դեպքում, չեթե ավյալ վայրում ելեքտրականություն կա, բնակարանավարձը իջեցվում է  $5\frac{0}{100}$ —ով, ջրմուղ չլինելու դեպքում ելի  $5\frac{0}{100}$ -ով, իսկ չեթե բնակարանը նկուղային է,  $25\frac{0}{100}$ —ով, ուրեմն, չեթե բանվորը վճարում է բնակարանային վարձ 3 ո. 15 կոպ., ապա այդ բնակարանավարձը չիջյալ հարմարությունների բացակայության պատճառով

լենթակա չե իջեցման ընդամենը  $35^0/0$ -ով, այսինքն 3 ու. 15 կ.-ից հարկավոր ե հանել 1 ու. 10 կ., վորով կստացվի 2 ու. 5 կ.:

(3 ու. 15 կ.-ի  $5^0/0$ -ը=15 և կես կոպեկի,  $5^0/0$ -ը=15 և կես կոպեկի և  $25^0/0$ -ը=79 կոպեկի, ընդամենը  $35^0/0$ -ը=1 ու. 10 կոպեկի):

Ուրեմն բանվորը բնակարանավարձ պիտի վճարի բնակարանի համար ընդամենը 2 ու. 5 կ.:

Բնակարանային վարձի իջեցումը վերաբերում ե նույնպես այն անաչնագործներին և արհեստավորներին, վորոնք չունեն վարձու բանվոր կամ ունեն մի բանվոր կամ չերկու աշակերտ և չեկամտային հարկ չեն վճարում, կամ վճարում են (հոդ. 5) վորոշ դեպքերում: Բնակարանային վարձի իջեցումը բացի վերոհիշյալ դեպքերից կարող ե տեղի ունենալ ըստ նոր որենքի և հետևյալ դեպքերում.—

Յեթե բանվորների և ծառայողների հետ միասին ապրում են ինքնուրույն աշխատանքից զուրկ ընտանիքի այլ անդամներ և ընտանիքի յուրաքանչյուր անդամին ընկնում ե նրա ծախքով ապրող չերկու անձից ավելի, ապա սկսած աշխատողի ծախքով ապրող չերրորդ անձից, յուրաքանչյուրի համար բնակարանավարձը զեղչվում ե  $10^0/0$ -ով, սակայն զեղչի ընդհանուր զու-

մարը չի կարող ամբողջ բնակարանագարձի  $30^0/0$ -ից ավելի լինել: Պարզենք որինակներով. չենթադրենք, վոր բանվորի ընտանիքը բաղկացած ե իրենից, կնոջից և տղայից: Ընտանիքում աշխատող ձեռքը միայն բանվորն ե, իսկ ընտանիքի մյուս անդամները — կինը և տղան ապրում են նրա ծախսով: Այդ դեպքում բնակարանավարձի զեղչ չի կարող տեղի ունենալ, վորովհետև ինքնուրույն աշխատանքից զուրկ ընտանիքի չերկու անդամը, վորոնք ապրում են աշխատողի ծախքով, հաշվի չեն առնվում. զեղչը տեղի չե ունենում նրա ծախքով ապրող չերրորդ անձի համար:

Ուրիշ որինակ: Յենթադրենք, վոր բանվորը ունի կին և չերկու քույր. բոլորը ապրում են միասին և բնակարանային վարձ են տալիս ամսական 4 ուրբ., ընտանիքում աշխատողը միայն բանվորն ե, իսկ ընտանիքի մյուս անդամները՝ կինը և քույրերը ապրում են նրա ծախսով: Այս դեպքում բնակարանային վարձը զեղչվում ե  $10^0/0$ -ով ընտանիքի 3-րդ անձի համար. կինը և քույրերից մեկը — չերկու հոգի համարվում են աշխատողի ծախքով ապրողներ. ուրեմն 4 ու. բնակարանային վարձը զեղչվում ե  $10^0/0$ , վորը հավասար ե 40 կ.-ի, կամ ընդամենը բնակարանային վարձ բանվորը պետք ե տա — 3 ու. 60 կ.:

Ընդձեռք նույնպես, վոր նոր որեւորքը բան-  
վորների համար բնակարանավարձ վճարելու  
ժամկետը սահմանուում և հաջորդ ամսի 10-ից  
վոչ ուշ, իսկ մնացած վարձողների համար ըն-  
թացիկ ամսի 15-ից վոչ ուշ:

### III ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՈՒ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՀԱՎԱՍԱ- ՐԵՑՐԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՁԸ.

Որեւորք մի շարք կատեգորիայի անձանց  
բնակարանային հարցում հավասարեցնում և բան-  
վորներին ու ծառայողներին: Այդ կատեգորիա-  
ները հետևյալներն են:

1) Պետական թոշակավորները և սոցիալա-  
կան ապահովութեան (ապահովագրութեան) կար-  
գով խնամվող անձինք, վորոնք 20 ո. ավելի  
չեն ստանում.

2) գործազուրկները, վորոնք նպաստ ստա-  
նալու իրավունք ունեն.

3) կարմիր բանակայինների ընտանիքները,  
վորոնք ինքնուրույն չեկամսի աղբյուր չունեն.

4) պետական գալրոցների ուսանողները, վո-  
րոնք ստանում են պետական թոշակ կամ ազատ-  
վում են վարձից:

Այդ բոլոր կատեգորիաները բնակարանային  
վարձ վճարում են 20 ո. վոչ ավելի աշխատա-

վարձ ստացող բանվորների ու ծառայողների  
համար սահմանված կողարներով 1 (հոգ. կես  
«ա»): ուրիշ խոսքով՝ այդ անձինք ինչպես  
Յերևանում, Լենինականում նոյնպես և այլ քա-  
ղաքներում և վաչրերում բնակարանային վարձ  
վճարում են 5,5 կ. մի քառ. մետր բնակելի  
տարածութեան համար — այն բոլոր արտոնու-  
թեւաններով, վորոնք վերապահված են բանվոր-  
ներին ու ծառայողներին բնակարանավարձի  
վերաբերմամբ:

Վերեվում հիշված կարմիր բանակայինների  
ընտանիքների անդամները կարող են իսպառ  
ազատվել բնակարանային վարձից տեղական խոր-  
հուրդների կամ գավգործկոմիների կողմից:

Յեթև վերեւում հիշատակված պետական  
թոշակավորները կամ սոցիալական ապահովու-  
թեան կարգով խնամվող անձինք թոշակ կամ  
նպաստ են ստանում ամսական 20 ո. ավելի,  
ապա այդ վեպքում նրանք բնակարանային վարձ  
վճարում են իրենց ստացած թոշակի կամ  
նպաստի համեմատ, այսինքն՝ 20 ո. ավելի  
ստացող բանվորների ու ծառայողների համար  
սահմանված կողարներով այն բոլոր արտոնու-  
թեւաններով, վորոնք նոր որեւորով սահմանված  
են վերջինների համար. (տես տախտակ՝ 1-ին  
հոգվածի «բ» — «ծ» կետերը):

Որենքը նույն արտոնություններն և տալիս նոյնպէս գրական աշխատանքով գրադպրոցներին նկարիչներին, քանդակագործներին ու գիտական աշխատավորներին. նրանք բնակարանային վարձ վճարում են բանվորների ու ծառայողների համար սահմանված կոպարներով (տես տախտակ՝ 1-ին հոդվածի «ա» — «ծ» կետեր):

Պետք է շեշտել և այն, վոր աշխատավորական արտեւներին անդամները, չեթե աչգ արտելները աշխատում են պետական ձեռնարկություններին և հինարկություններին պատվերներով և չեթե նրանք իրենց աշխատանքի համար ստանում են վորոշ վարձատրություն և մաս չեն ստանում արտելի վաստակից, նույնպէս բնակարանային վարձը վճարում են բանվորների ու ծառայողների համար սահմանված կոպարներով:

**IV. ՏՆԱՅՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՈՒ ԱՐԶԵՍԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԱՆՁԱՆՑ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՁԸ.**

Որենքը անաջնագործներին ու արհեստավորներին բաժանում է չերեք կարգի.

1) անաջնագործներ ու արհեստավորներ վորոնք չունեն վարձու բանվորներ կամ

աւնեն մի բանվոր կամ չերկու աշակերտ և չեկամտային հարկ չեն վճարում.

2) նույն անաջնագործներն ու արհեստավորները միևնույն պայմաններում, չեթե վճարում են չեկամտային հարկ.

3) անաջնագործներն ու արհեստավորները, վորոնք ունեն չերկու կամ չերեք վարձու բանվոր կամ չերեքից մինչև վեց աշակերտ:

Որենքը անաջնագործների և արհեստավորների վերաբերմամբ բնակարանային վարձ սահմանում է նրանց չեկամտի համեմատ, վորոշում է նոյնպէս բնակարանավարձի նվազագույն և առավելագույն կոպարները, թույլ տալով աչգ սահմաններում մասնավոր համաձայնություն կնքել տանտիրոջ հետ:

1-ին կարգի արհեստավորների ու անաջնագործների նվազագույն բնակարանային վարձի մի քառ. մետրի համար կոպարը 26 կ. է, ինչպէս Յերևանում, Լենինականում, նույնպէս և այլ վայրերում: Իսկ բնակարանավարձի առավելագույն կոպարը Յերևան ու Լենինական քաղաքներում — 38 կ., այլ քաղաքներում 30 կոպ. իսկ գավառային ու գավառակային կենտրոններում ու բանվորական ավաններում — 26 կ.:

Նույն սկզբունքը որենքը կիրարկում է և 2-րդ և 3-րդ կարգի անաչնագործների և արհեստավորների վերաբերմամբ այն զանազանությամբ, վոր բնակարանային վարձի նվազագույն և առավելագույն կողարները որենքը սահմանում է առանձին-առանձին Յերևանի և Լենինականի, այլ քաղաքների, գավառային ու գավառակային կենտրոնների և բանվորական ավանների համար (տես 2-րդ հոդ. «բ» և «գ» կետերը): Այս սկզբունքը անաչնագործների և արհեստավորների բնակարանավարձի վերաբերմամբ նույն որենքը կիրարկում է այն դեպքում, յերբ սահմանում է բնակարանային վարձը ազատ պրոֆեսսիայի տեր անձանց (բժիշկներ, ճարտարագետներ, գառախան կողբիայի անգամներ և այլն) առևտրականների և անաշխատ կատեգորիաների այլ անձանց վերաբերմամբ. միայն ազատ պրոֆեսսիայի այն անձանց վերաբերմամբ, վորոնք չեկամտային հարկ չեն վճարում, որենքը բնակարանային վարձը սահմանում է հետևյալ նորմաներով.— 38 կ. մի քառ. մետրի համար Յերևան և Լենինական քաղաքներում, 32 կ. այլ քաղաքներում և 26 կ. գավառային ու գավառակային կենտրոններում ու բանվորական ավաններում:

## V. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԸ, ՎԱՐՁԱՏՈՒԻ ՈՒ ՎԱՐՁՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Նոր որենքի գլխավոր նպատակն է գոյութուն ունեցող բնակելի Փոնդը պահպանել: Այդ աեսակետից բնակարանային վարձը սահմանված է այնպիսի չափերով, վորպեսզի հարավորութուն լինի ծածկելու բնակարանային անտեսության ծախսերը: Տների ծախսերը նոր որենքը համարում է աների կառավարչութունը, շենքերի ու մալիների վերաշինությունն ու պահպանութունը, գիշերապահների ու դռնպանների վարձը, բակերի ու սանդուխքների լուսավորութունը, անհրաժեշտ ինվենտարը գնելու և այլ ընթացիկ ծախսերը, ինչպես նաև հարկերն ու ապահովագրական տուրքերը:

Այդ բոլոր ծախսերը որենքը դնում է անատերերի վրա:

Ծախսերի մեջ ի միջի այլոց հիշված են շենքերի վերաշինության (վերանորոգության) ծախսերը:

Վերաշինության ծախսեր ասելով պետք է հասկանալ հիմնական վերանորոգութունը և

նրա հետ կապված անհրաժեշտ ծախքերը. հիմնական նորոգութիւնն պետք է համարել այն աշխատանքները, վորոնք կատարվում են շէնքի հիմնական տարրերը կամ մասերը վերականգնելու նպատակով այն գեպքերում, չէրը տունը ժամանակի ազդեցութեան տակ բնական ընթացքով խարխուլ է դառնում կամ նրա այս կամ այն մասը քայքայվում է անատիրոջ կողմից իր ժամանակին անհրաժեշտ նորոգութիւնները չկատարելու հետեանքով, որինակ՝ չէրը տնասերը ծածկը չի նորոգում, գերանները, պատուհանների ու դռների շրջանակները չի փոխում, պատշգամբը չի ուղղում և այլն: Պետք է նշել, վոր հիմնական նորոգութիւնը Քաղաքացիական Որենսգրքի համաձայն (159 հոդ.) անատիրոջ անմիջական, ուղղակի պարտականութիւնն է կազմում, և նոր որենքի մեջ այս հանգամանքը առանձնապէս ընդգծված է:

Ինչ վերաբերում է վարձողների պարտականութիւններին, ապա պետք է նշել հետևյալը.

Քաղաքացիական Որենսգրքի համաձայն (161 հոդ.) վարձողը իր հաշվով կատարում է վարձած գույքի ընթացիկ նորոգութիւնները, չեթե որենքով կամ պայմանագրով այլ բան չէ սահմանված:

Ընթացիկ նորոգութիւնն ասելով հասկացվում են այն աշխատանքները, վորոնք ելական փոփոխութիւնն չեն մտցնում շէնքի մեջ, ինչպէս, որինակ, ապակիներ գցելը, ջրի ծորակներ դնելը, դռների փականքներն ու բռնակները պարքելը, լողարաններն ու նրանց պատկանելիքները կարգի բերելը, դռների ու լուսամուտների սողնակները (ЗАДВИЖКИ) սարքելը և այլ մանր նորոգութիւններ, վորը կատարում են վարձողները:

Որենքի մեջ շեշտված է նաև այն, վոր տնատերերի կողմից վարձողներին մատուցվող կոմունալ ծառայութիւնները (որինակ՝ ջուր, էլեկտրականութիւն և այլն), ինչպէս նաև կենտրոնական տաքացման վարձը վճարվում է շուրքանշուր վարձողի փաստացի սպառման չափով, անկախ նրա վճարած բնակարանային վարձի չափից:

Ի վերջո անհրաժեշտ է ընդգծել նոյնպէս բնակարանային որենքի չերկու կարեւոր կետերը. —

1) որենքի ներգործութիւնը տարածվում է բոլոր ազգայնացրած, քաղաքայնացրած և մասնավոր տների վրա բացի կառուցման իրավունքի հիման վրա (Քաղ. Որ. 71 հոդ.) կառուց-

ված, վերաշինված և ավարտված տներին (Քաղ. Որ. 166 հոդ. ծանոթ.): Նույնպես որենքի ուժը չի տարածվում որով բնակվողներին վարձով տրվող հյուրանոցների, նաև բանվորական բնակարանային կոոպերատիվներին տրված տների, ինչպես և նոր կառուցված շենքերի վրա. վերջիններից գանձվող բնակարանային վարձը կարգավորվում է հասուցի կանոններով:

2) Նոր բնակարանային որենքը ուժի մեջ է մտնում 1928 թ. ապրիլի 1 ից: Այդ պահից բնակելի շենքերի վերաբերյալ բոլոր պաշտնադրերի աչն մասը, վեր վերաբերում է այդ շենքերի վարձի չափին և հակասում է նոր որենքով նախատեսված պաշտանների, չենթակա չե փոփոխության: Այդ նշանակում է հետևյալը.

Յեթև, որինակ, բանվորը ստիպված է չեղել մասնավոր համաձայնությունը վարձելու բնակարան և վճարելու իր նյութական հնարավորությունից վեր բնակարանավարձ (60 ուսուցիչ վճարում է 10-15 ո. ամսական), այլա նոր որենքը ուժի մեջ մտնելուց հետո նա հնարավորություն ունի այդպիսի պաշտանագիրը փոխնչացնելու և բնակարանավարձ վճարելու որենքով սահմանված կրպարներով:

Վարձողներից որենքով սահմանված չափերից ավելի բնակարանային վարձ գանձելը չի թույլատրվում:

Բանվորների և պետական ծառայողների վերաբերմամբ որենքի այդ պահանջը խախտելու պեպքում գանձողները չենթարկվում են պատասխանատվության Քր. Որ. 121 հոդ. համաձայն, իսկ այդ հոդվածը նախատեսում է սոցիալական պաշտպանություն միջոց — հարկադիր աշխատանքներ մինչև չեքեք ամիս ժամանակով կամ տուգանք մինչև 500 սուր.



«Ազգային գրադարան»



NL0218236

37.667